

ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

«Էջմիածին» ամսագրում 1950—1952 թվականների ըն-
թացքում լույս տեսավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձե-
նագրատան ձեռագրաց առաջին հարյուրյակի ցուցակը:
Ամպագրում 1960—1963 թվականներին լույս տեսավ նոր
ստացված ձեռագրերի երկրորդ հարյուրյակի ցուցակը:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Մայր Աթո-
ռիս ձեռագրատունը ձեռք է բերել նույնքան թվով ձե-
ռագրեր: Անհրաժեշտ ենք համարում սկսել այդ ձե-
ռագրերի երրորդ հարյուրյակի ցուցակի հրատարակու-
թյանը:

Վեհափառ Հայրապետի ջանքերի շնորհիվ, վերջին
տարիներս տասնյակներով ձեռագրեր նվիր ստացվեցին
Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Արգենտինայից,
Քուբերիայից, Եգիպտոսից, Հնդկաստանից, Ֆրանսիայից,
Հունաստանից և Ռումինիայից: Ներքին թեմերից ևս
ստացվեցին մի շարք արժեքավոր ձեռագրեր: Բոլոր
նվիրատուներին հայտնում ենք Վեհափառ Հայրապետի
օրհնությունները և Մայր Աթոռիս ձեռագրատան վար-
չության շնորհակալությունները:

Պանդխտությունից փրկված ամեն մի հայերեն ձե-
ռագրի և պատուիրակ արժեքավոր ներդրում է մեր հնա-
գարյան մշակույթի առումնասիրության և գնահատման
ընթացվառում:

Կազմող՝ Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

№ 201

ՔԱՐՈՉԳԻՐՔ

Թերթեր՝ 588.— Պրակներ՝ 97 հատ, յուրաքանչյուրը
6-ական թերթից: Մեծուրյունը՝ 34×23×9,4 սմ.:—
Նյութը՝ դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:—
Կազմը՝ կաշեպատ տախտակ, վրան ոսկեզույն նախշեր,
հատկապես կազմի կոնակի մասում: Կան կրկու կաշյա
րոնիչներ:— Պահպանակներ՝ սկզբից և վերջից 5-ական
թերթ հասարակ թուղթ:— Վիճակը՝ բավարար:— Գրու-
թյունը՝ սիրայուն:— Դատարկ թղթերը՝ թ. թ. 1—4 և
5—588:— Տպերը՝ 27—39:— Գծումները՝ ճշշումով:—
Կր.՝ հասարակ ն. տրգիր: Հետևյալ թերթերը զրված
են գեղեցիկ բուրբուրով՝ թ. թ. 226ա—238բ, 376ա—
379բ, 382բ—384բ և 439ա—443ա:— Զարդագրություն՝
կա:— Գրիչը՝ Կոստանդնուպոլսի Հակոբ Նալյան Պատ-
րիարք Զմարացի (1752—1764):— Պատվիրատուն՝ ան-
հայտ:— Ժամանակը՝ 1755—1758 թ. թ.:— Վայրը՝
Կոստանդնուպոլիս:— Մաճորություն՝ սույն ձեռագիրը
նվիր է տրված Վեհափառ Հայրապետին 1961 թվակա-
նին Ստամբուլ Իր այցելությունից առթիվ, Ալեքսանդր
Նանասովի և Իր դստեր՝ Էվգենիայի կողմից:

ԲՈՎԱՆԻՒԿՈՒԹՅՈՒՆ

Թ. թ. 6ա—567բ.— Քարոզգիրք:
Թ. թ. 568ա—583ա.— Ցանկ քարոզիչների
(երկսյուն):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 5ա.— Զբոլոր գործս զայս նուիրեմ քեզ
Հոգի Սուրբ Աստուած. զբոյս ի բոյոցդ քեզ
առաջնոյ պարգևիդ ընծայելով աղքատս ամե-
նահարստի Տեառնդ իմոյ զիս ստացողիդ որ-
պէս և աստուածաբանն Գրիգորեան. ի ճառիյ
որ ի վերայ բոյ աստուածաբանութեանցն
ասաց թէ մեք այնքան վստահանամք ի Հո-
գին զոր պարշեմք, մինչ զի աստուածաբա-
նութեանս աստի արասցուք սկիզբն, վասն
որոյ և հիմն ամենայնից բարեաց, և արմատ
ընաւից պարգևաց զքեզ դաւանելով, զկան-
խախայծս զայս քարոզ ի պատիւ աստուածու-
թեանդ նուիրելով, զօգնութիւն քո հայցեմ
նուաստս ի բանասիրաց Յակոբ և Եթ անար-
ժան պատարիարգս Կոստանդնուպոլսոյ, որ-
պէսզի որ յամենայնի նուագեալն եմ. զի քեզ
համայն ստանալով. զգոյն իմ և զքարոզ
գոյն խնամեալ դարմանիցես, և անուանդ
բում զփառս տացես, և զի դու եղեր պարզն
լարչարանաց էակիցդ և փառակցիդ՝ նմին
իրի յուրբաթի աւուրն վերջնոյ մեծի Բարե-
կենդանին սկսայ ի փառս քո յամի մարդե-
ղութեան ք և օծեցելոյ Տեառն Յիսուսի Քրիս-
տոսի 1755, և Հայոց ՌՄԴ, ի մարտի երեքն:
Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ
Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա ի մեզ:

Թ. 567բ.— Ի պարգևաց Հոգւոյն աւար-
տեցաւ կիրակէից բարոզգիրքս, յամի Տեառն
1758, և հայոց ՌՄԷ, յունիսի ամսոյ ԺԹ, ի
տօնի Սրբոյն Յօհաննու Մկրտչի, և Աթանա-
գինեայ եպիսկոպոսի, ի փառս եռանձեայ և
միոյ աստուածութեանն, Հօր, և Որդւոյ, և
Հոգւոյն Սրբոյ, և ի պատիւ ամէնօրհնեալ
մօրն Յիսուսի և Աստուածածին Կուսի իմոյ
յատկական այցելուի և բարեխօսի, և Սրբոյն
Յովհաննու Մկրտչին և ամենայն սրբոց:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Ա. Ն., Կ. Պոլիս:
Թ. 3ա.— Ա. Նանասով, Կ. Պոլիս, 1961:
Թ. 5ա.— (մեքենագրված) Առ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազ-
գէն Ա Ամենայն Հայոց Հայրապետին, կը մատուցանէ՝
նորգիական սրտագին և խոր յարգանքներով:
Ալեքսանդր Նանասով և դուստր Էվգենիա, Կ. Պոլիս,
12—7—1961:
(Ձեռագիր ստորագրություն) Ա. Նանասով:

№ 202

ԺՈՂՈՎԱԾՈՒ

Թերթեր՝ 485:— Պրակներ՝ 44, յուրաքանչյուրը
12-ական թերթից: Պրակներ լԳ՝ 2, ԻԱ և ԽԴ՝ 4, լԳ՝ 6,
ԻԳ՝ 8, ԺԲ, ԻԲ, լԹ և Խ՝ 10, Ա՝ 11 թերթից են:—

Ֆեծուրյունը՝ 28,8×19,5×6,7 սմ.— Նյութը՝ զեղնած կեղտոտած թուղթ, որոշ տեղեր հաստ թուղթ, իսկ որոշ տեղեր էլ բարակ։ Այնքան բարակ է թուղթը, որ անանաքը զուրս է եկել թղթի մյուս երեսը։— Կազմը՝ ցաշկապատ ստվարաթուղթ, քայքայված և կաշին պատած։— Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական անասարակ թուղթ։— Վիճակը՝ բավարար։— Գրությունը՝ փրկայուն։— Դատարկ բղբերը՝ բազմաթիվ թղթերում յիստի մի երեսն է գրված՝ թղթի վատորակ լինելու պատճառով։ Հետևյալ թերթերը դատարկ են՝ թ. թ. 141, 142, 331, 332, 375, 376, 433, 434, 484 և 485։— Տողները՝ 32—33։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ նոտրգիր, մեղ-տեղ լավ, իսկ տեղ-տեղ էլ հապենպ կերպով գրված։— Զարդագրություն՝ չունի։— Գրիչը՝ Ղուկաս արդապետ Խարբերդցի։— Պատվիրատուն՝ Կոստանդնուպոլսի Հովհաննես Կոլոտ Պատրիարք Բաղդեցի (1715—1741)։— Ժամանակը՝ 1741 թ.։— Վայրը՝ Կոստանդնուպոլիս։— Մանրություն՝ սույն ձևագիրը վայր է տրված Վեհափառ Հայրապետին Ստամբուլ Իրայցեղության առթիվ 1961 թվականին, տեղ և տիկին Ադամյան Ադամների կողմից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Անտառ նորագոյն մտածման, հիմնեալ ի հեղինակութեան Սուրբ Գրոց, ի սուրբ հարց և յայլոց ծայրագոյն վարդապետացն Սուրբ Եկեղեցւոյ։

Յարմարեցուցանելի ամենից լուր աւուրցն քառասնորդաց կիրարկէից ի մէջ տարւոյն և հասարակ տօնից։

Ի յարգելի Տեան Աղէքսանդր Գալամաթօ կոչեցելոյ Մէսինացւոյ։ Ի Պատուալ։

Թարգմանեցեալ յիտալականէ լեզուէ ի հայկական բարբառ ի Ղուկաս վարդապետէ Խարբերթացւոյ։

Յամի Փրկչին 1741։

Ըստ ինդրոյ արհի և պանծալի եպիսկոպոսին Տեան Յովհաննու պատրիարքին Կոստանդնուպոլսոյ։

Ի Կոստանդնուպոլիս։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Ամենայն հայոց Վեհափառ Հայրապետ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա-ի Իսթանպուլ այցելութեան առթիւ Տէր և Տիկին Ադանիկ Ադամ սոյն Աւետարանը կը նուիրեն Ս. էջմիածնի։ Իսթանպուլ, 16—7—1961։

№ 203

ԱԻՆՏԱՐԱՆ

Թերթերը՝ 307։— Պրակները՝ 26, յուրաքանչյուրը 12 թերթից, ի ըաց առյալ վերջինը, որ 7 թերթ է։— Մեծուրյունը՝ 26,5×20×7 սմ.— Նյութը՝ զեղնած և կեղտոտած հաստ թուղթ։— Կազմը՝ կաշկապատ տախտակ, որի վրա ժամանակին երեք ըմբիներ են եղել, սակայն այժմ ընկել են։ Կազմի վրա ճնշումով մի մեծ

խաչ և այլ զարդեր են դրոշմված։— Պահպանակները՝ սկզբից և վերջից մեկական թերթ մազազաթ, որոնք նույն թերթի երկու կեսերն են։ Մագաղաթի գրութունը Ավետարանից է, հնութիւնը ԺԹ—ԺԳ դարեր, ունի մի հաստ դունավոր հասարակ զլխազարդ և մի հաստ էլ բավական գեղեցիկ մարդագիր։— Վիճակը՝ լավ։— Գրությունը՝ երկայուն։— Դատարկ քերթերը՝ թ. թ. 1, 2, 25։— Տողները՝ 21։— Գծումները՝ ճնշումով։— Գիրը՝ բուրգգիր։— Զարդագրություն՝ ձևագիրն ունի բավական գեղեցիկ զարդագրութուն և մանրանկարութուն։ Կան ամբողջական թերթի մեծութամբ չորս ավետարանիչներ Նկարները (թ. թ. 29բ, 100բ, 149բ և 231բ), ձևագրի սկզբում 16 թերթ մեծ նկարներ՝ առնված Հիսուսի կյանքից։ Ձևագիրն ունի նաև ութ էջ համարաբար, բազմաթիվ խորաններ և զմբեթներ, թռչուններ և սիրամարգեր, ծառեր և ծաղիկներ, զազաններ և հրշտակներ, սրբեր և մարդագուլիս թռչուններ, խաչեր և լուսանցազարդեր, զարդագրեր և մարդագրեր, թռչնագրեր և զազանագրեր։— Գրիչը՝ Հովհաննես քահանա։— Պատվիրատուն՝ Մխիթար։— Մաղկաղը՝ անհայտ (թ. թ. 20բ-ում և 21ա-ում նկարված երկու եղիկների վրա թվում է թե գրված է ծաղկողի անունը, սակայն այժմ անընթեռնելի է)։— Ժամանակը՝ 1624 թ.։— Վայրը՝ Խիզան։— Մանրություն՝ սույն ձևագիրը վերջերս Վեհափառ Հայրապետի անունով նվեր է ստացված Իրանից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 301բ.— Փառք անսկըզբան և սկզբանն ամենայնի...

Թ. 303ա.— ... Ուստի և տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն ի լուսածնեալ զարմից բարեպաշտ Մըխիթարն զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ աստուածախաւ Սուրբ Աւետարանիս և ըստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողացն Ովազարին և Բուրսամին և որդոյն իւրոյ Թասալոյն և կողակցացն (թ. 303բ) և ամենայն արեան մերձաւորացն։ Ամէն։

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զբարեմիտ և զըհեզահոգի Մխիթարն և ծնողաց նորին՝ Ովազարին, Բուրսամին և որդոցն Մարութէ, Մուշեղին, որ ըստացաւ զՍուրբ Աւետարանս յիշատակ հոգոյ իւրոյ և ծննաւորացն իւրոց, ի միտ առեալ զըբանն ծաւայոյ որ ասէ—Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանեակ յԵրուսաղէմ։ Վասն այն յուսոյն ըստացաւ զՍուրբ Աւետարանս։

Եւ արդ եղև զբաւ և կատարումն հրաշալի և աստուածախաւ Սուրբ Աւետարանիս ի մայրաքաղաքս Հիլդան ընդ հովանեաւ սուրբ է տաճարացս Սուրբ Յարութեան և Սուրբ Աստուածածնիս, և Սուրբ Յովհաննէս Մկրտչին, և Սուրբ Գրիգորին և Սուրբ Ստեփաննոսին և Սուրբ Սարգսսին զարաւարին և որդւոյ նորա Մարտիրոսին, (թ. 304ա) ի

թուին Հայոց ՌԷԲ (1624 թ.) ամին, ձեռամբ անարգ և անպիտան սուտանուն Յոհանիսի որ անուամբ միայն եմ քահանայ և դատարկ յամենայն բարեաց, որ և մեղաք ցնորեալ կամ յաշխարհի, կորացեալ մտօք իբրև զմուրեալ ոչխար, ոչ ճանաչելով զճշմարիտ հովուապետն զՏէրն մեր Յիսուս Քրիստոս: Բայց աղաչեմ զձեզ զամենեսեանդդ կողկողազին պաղատանօք զի լի և առատ սրտի մեղաց թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ ստացողի Սուրբ Աւետարանիս սրբասէր և բարեմիտ Մխիթարին և ծնաւդացն Ովազարին, Բուրսամին, և ծնողաց և ամենայն ազգականաց նոցին, և ինձ անարժան Յոհանիսի և ծնողաց իմոց Տէր Յովանիսիին և Ահլուն, և պապուն իմոյ Տէր Միքայելին, և եղբարց իմոց Տէր (թ. 304թ) Միքայելին, Ամիրսէթին, ի բերն իմոյ Հոբոսիմին որ փոխեցեալ են առ Քրիստոս և ամենայն ազգականաց իմոց կենդանեաց և հանգուցելոցն մերոց: Ամէն:

Եւ առաւել Աստուած ողորմի ասացէք լի բերանով և ուղիղ սրտիւ իմ վարդապետին Տէր Կիրակոսին և ծընողացն և ամենայն ազգականաց նորա, կենդանեաց և հանգուցելոցն: Ամէն:

Եւ արդ եղև ի յայսմ ամի եղև մահտարածամ սաստիկ ի Մսրըր և ի Ստամբուլ, Բ ամով յառաջ և եկեալ հասաւ մինչև ի Յալապ և յՈւրհայ, և յԱմիթ և ի Բաղէշ, ի Վան և ի միջի մերում ի Խիզան, և ի մաւտակայ գաւառս մեր, և այնպէս սաստկացաւ մահն, զի ի յօրն Ճ (100) մեռեալ ելանէր ի Ա քաղաքէ, և ի բազում տանց Բ և Գ մի հետ տանէին ի դիր հանգստարանին (թ. 305ա) և Ժ-ն մեռելի մի կարք ասէին, և երեկոյի խոցացն ի լոյս ոչ ելանէր և քահանայք ոչ ժամանէին գալ ի տունս իւրեանց մինչև երեկոյի ժամուն ի հանգստարանէն, այլև ոչ հասանէին հաղորդութիւն տալ հիւանդաց, այլև այնպէս խստացաւ մահն մինչ զի Ե ու Զ տարւոյ տղայքն իւրեանց կաման զնային առ քահանայքն թէ զրմեզ հաղորդայ չի մեռանենք առանց հաղորդի: Եւ արդ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց: Զի դառնութիւն գործոց մերոց ել յերկինս և սրտմտեցոյց զկամք Արարչին մերոյ ի վերայ երկրի և մատնեցաւ արդարն ընդ ամբարշտնն, քանզի ելաք ի հրամանէն Աստուծոյ և մոռացաք զովստն զոր եղ առ հարսն մեր: Բայց ունիմք բարեխօս զՍուրբ Կոյսն Տիրամայր Աստուածածին, (թ. 305բ) զի նա աղաչէ զՈրդին իւր Միածին զի փրկեցէ և ազատեցէ զամենայն հաւատացեալս անուան իւրոյ ի յորոգայթից թշնամւոյն: Ամէն: Մանաւանդ զըստացող Սուրբ Աւետարանիս զբարեմիտ և զհեզահոգի Մլխիթարըն և զծնողսն իւր Ովազարն, Բուրսամըն և զեղբայրն իւր Մալումն, Մուշեղն,

Մարութէն և քեռն իւր Մէրտատիկն և կողակիցն իւր Վարթիկն և ամենայն դստերքն իւր Ամէն:

Դարձեալ կրկին անկամ յիշեցէք ի Քրիստոս զԱմիրսէթ եղբայրն իմ, և զհոգևոր եղբայրն իմ զՍտեփաննոսն որ ի յայսմ նշանէս փոխեցան առ Քրիստոս Աստուածն մեր ի յոյսն ամենեցուն: Ամէն: Եւ արդ, անմեղադի լեռուք, ո՛վ եղբայրք, խոշորութեան և սխալանացս, զի կայր մեր այս է: Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ արինակելով զպակասու (թ. 306ա) թիւն լնուք և զուելորդն բառնայք և այլ և այլ գրոյս անմեղադիր լեր, զի կայր մեր այս էր: Արդ, աղաչեմ զձեզ Աստուած ողորմի ասացէք անպիտան գրչիս Յոհանիսի և ծնողաց իմոց և ամենայն ազգականաց մերոց կենդանեաց և հանգուցելոց և այնոցիկ որ ի վերայ մեր աշխատանք և երախտիք ունին: Ամէն: Աւրհնեա Տէր: Հայր մեր:

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ յիշել ի Տէր զստացող Սուրբ Աւետարանիս զմահողասի Մխիթարն և ծնողն իւր Ովազարն, Բուրսամն և եղբայրքն իւր Մալումն, Մուշեղն, Մարութէն և քոյրն իւր Մէրտատիկն, և կինն իւր Վարթիկն և որդին իւր Թասալի և դստերքն Մարիամն, Սաբրիկն, Դշխունն, Մէրտատիկն, և հանգուցեալ կանայքն իւր: Տնայինքն և այլքն որ է արհնեալ յարիտեան:

Արդ, ես Մխիթարս ստացայ զՍուրբ Աւետարանս ի հալալ վաստակոց իմոց, ընծայ տվի Բեղդահէմ եկեղեցոյն:

ՀԻՇԱՏԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Գրված կազմի առաջին երեսի կոնակին կայցված կարմիր կտորի վրա).

Այս մատունս Ավետար. Տր. Նեկեղայոս այն իրան որդին Վանդազարսն և Եղնազարսն, Տր. Նեկեղայոսն: Թ. 307ա.— Գրեցաւ ձեռամբ Տէր Նազարէթ քահանայի Տէր Ղևոնդիանի ի թն. 1946 յունվար 30-ին Շարովայում:

(Ձեռագրի վերջի մագաղաթյա պահպանակի երկրորդ երեսում գրված է).

1882 ամի հանդիպեցայ Ամ. Սուրբ Ավետարանիս նշխա քահանա Ենովսեան:

№ 204

ՅՈՒՆԱՅ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

Քերթբեր՝ 68.— Պրակեբը՝ 17, յուրաքանչյուրը 4 թիթից, ի բաց առլալ Ա՝ 3 և Ժէ՝ 5 թերթից.— Մեծալբունը՝ 26×19,5×2 սմ.— Նյուրը՝ մաքուր, սպիտակ հաստ թուղթ.— Կազմը՝ կաշեպատ ստվարաթուղթ, որի վրա ճնշումով նկարված են զարդեր: Կազմի առջև երեսում կա ոսկեզույն մի խաչ, իսկ կոնակի երեսում դարձալ ոսկեզույն Մարիամ Աստվածածինը և Հիսուս:— Պահպանակեբը՝ սկզբից և վերջից մեկական

Վրթ բաց վարդազուն հասարակ թուղթ:— Վիճակը՝
 վարար:— Գուրբյունը՝ միասյուն:— Դատարի բղբն:՝
 Վիճի:— Տողբը՝ անկանոն:— Գծումները՝ առանց
 նշան:— Գիրը՝ նոտրգիր:— Զարդագուրբյուն՝ ձևա-
 ման ունի կարմիր թանաքով նկարված հասարակ հինգ
 անաղարգ և շրտ թռչնադիր:— Գրիչները՝ Մահտեսի
 Վիճանենս դպիր Սիմոնյան և Յորկի աղայի որդի Ա-
 Վլյանի:— Պատվիրատուն՝ անհայտ:— Մաղկողները՝
 իստ հավանարար գրիչներ են:— Ժամանակը՝ 1846—
 1847 թ. թ.:— Վայրը՝ Ակնի վանք դուղ:— Մանրու-
 թուն՝ սույն ձևագիրը 1961 թվականին նվեր է ստաց-
 ւած Աթենքից, հարյուրամյա ակնեցի Եփրեմ Թաշճյանի
 որդից, հունահայ թեմի առաջնորդական տեղապահ Տ.
 Ամենակ-Մեսրոպ ավագ քահանա Տեր-Հակոբյանի
 օգնությամբ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. Ձա.— Գիրք խորհրդայ Սրբոյ Պատա-
 ազի Յունաց:

Թարգմանեալ ի հելլենական բառէ առ հայ-
 աական բարբառ ի Մելայիմ օղլի Գեորգ վար-
 ապետէ:

Ըստ խնդրոյ և արդեամբք Զօրակցի Լազա-
 ոսի երկրպագող գերեզմանի Տեառն բարե-
 յաշտ և գրասէր քրիստոնէի:

Ի փառս և ի պայծառութիւն Կաթողիկէ և
 Առաքելական Եկեղեցւոյ, առ ի լուսաւորու-
 թիւն ամենայն քրիստոնէից:

Վերստին զծաղրեցաւ ի վերայ ձեռագրոյն
 Փինճանճի տիրացու մաղտեսի Յօհաննէսի
 արշին:

Ի ձեռամբն իմով վերստին զծաղրեցաւ
 Եթովանի դպրի մաղտեսի Սիմոնեան, ի յԱկ-
 ւա քաղաքի գեղջէն Վանուց արեւելեան և որդի
 Յեօրկի աղայի որդի Այմելեան:

Ի գիւղն Վանք 1846 ղեկտեմբեր 15-ին:

Թ. Յա.— Նախարանութիւն և թուղթ ի լոյս
 ածողի գրքոյս:

Բանաստեղծի և իմաստազունի Տեառն
 Մատթէոսի Տիրալուօյեան արքիտիագօրիզ
 ամենասրբազանի և աստածաբանագունի Մե-
 լիտինոյ եղբայրասիրի և արժանագունի տի-
 տասկալոսիզ ամենայնի միայնոյ սեռի:

... Եւ արդ գիրքս այս թարգմանեալ Պատա-
 րագ անուանեցաւ, զբեզ խնդրէ, որ և պատա-
 րագօղ և հասարակ թարգմանիչ հելլենականի
 սեռի են և համբաւիսդ:

Ուրեմն քո է թարգմանել զսա, որով փա-
 ռաւորեալ անուն քո, վայելէ զի փայլիցի ի
 ներկայս:

Եւ քոյ է զսա աստուածաբանել նարդեանս
 ըստ աստուածաբան հանճարեղութեան քում
 պատշաճ է լինիլ այս Սուրբ Խորհուրդ քահա-
 նայագործութեան, քո է սակաւս այս, ուրեմն
 գիտեմ այժմուս այլապէս անուն [վերադնել]
 բայց անշնորհ է [ինձ] որ ենթագրեցիցի: Ու-
 րեմն առ քեզ վերաբերեմ, զսա, ով հեղինակդ

մեր, և առ քեզ մատուցանեմ զայս երկիւղ-
 (թ. Յր)ածական, և բարեհաճողութեան ներ
 սրտի իմոյ զընծայս, և աղաչեմ զբեզ ընկալ
 զսա զուարթ երեսօք և ցնծայ:

Որ եմս բանաստեղծիդ նուաստ ծառայ, և
 հաւատարիմ աշակերտ: Ի Եօրկիոս Սուղտու-
 թիս՝ որ ի Իօնեան:

Թ. 66ա— Յիշատակարան:

Գրեցաւ Պատրագամատոյց կոնտակս Սրբ-
 րոյն Յօհաննու Ոսկեբերանին, և Սրբոյ մե-
 ծին Վասիլիոսի, և Սրբոյն Գրիգորի Աստուա-
 ծաբանին, նաև առաւօտու և երեկոյի ժամա-
 կարգութիւնս, ի ձեռամբն իմով յԵթովանի
 դպրի մաղտեսի Սիմոնեան և յԵօրկի աղայի
 որդի Այմելեան, ի յԱկնա քաղաքի գեղջէն
 Վանուց արեւելեան, ի վայելումն Շոգուի գիւղի
 Յօհան Ոսկեբերանի եկ(թ. 66բ)եղեցւոյն
 սպասաւոր քահանայից, եղի յիշտակ վասն
 հոգւոյ իմոյ, և վասն ծնողաց և ազգականաց
 և ընտանեաց իմոց: Աղաչեմք զձեզ, ով սրբա-
 զան քահանայք յիշեսցիք ի մաքրափայլ
 աղօթս ձեր զմեղսամած յԵթովանքս, և բարե-
 հասակ և վայելչազեղ որդեակիս իմ Սիմոն
 աղան և յԵօրկին և Լամպիկն և դուստրն իմ
 Մառինան և կողակիցս իմ Ելենի Տուտուն և
 թոռունքս իմ յԵօրտանն, Տիմիդրին, և Լազա-
 րագին, Սօֆիձան, և Սուլթանիձան, և Մայօ-
 րիձան, և Մաղարիդան, և հարսնեքս Մառի-
 նա Տուտու, Վառվառն և Շեքեր Մառիկըն:

Եւ ևս յիշեսցիք զնախանջեցեալ հայրքս և
 եղբարքս և ամենայն ազգականսն իմ՝ մաղ-
 տեսի Ուլանես, մաղտեսի Խազարոս, մաղտե-
 սի Սիմէօն, մաղտեսի Ըստեփան, Յեէօրիոս,
 Տիմիդրիու, Լազարի, Վասիլիու, Նիգօլայ,
 Անաստաս, Խարալամպի, մաղտեսի Պալա-
 սան, մաղտեսի Սուլթան, մաղտեսի Մա-
 րիամ Ելենի, մաղտեսի Մարիամ, մաղտեսի
 Ելենի, մաղտեսի Նիկօլ, Նազու, Սօֆիայ,
 մաղտեսի Մառիկ, Մարիամ, Պալասան, Մա-
 րիամ:

Եւ որք յիշէք յիշեալ լիցէք և դուք յաւուրն
 ետնում:

1847 փետրովարին 16-ին:

ՀԻՇԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի Ա էջում).

30—5—28 (հունարեւն գրված մի մարդու անուն, հայ-
 բանուն և ազգանունը).

(Նույն պահպանակի Բ էջում կա վեց տող հունարեւն
 գրութուն):

Ես եմ Քրիստոսի Մառայ զՏիոնդափիլըն որ 1902
 յունվար 3-ին գիւղէրնիս ճամբայ էլամբ ի Տիլարպե-
 ըրի զընալով միթրօքօլիս Սիլվէտրոս էֆ.-ի մօտ Գողմո
 Եկեղեցին քահանայ ուսօթօրիս էղաք և 1902 փետրովար
 3-ին ի կիրակի օրըն գիւղի գալով սուրբ օրհնութիւն
 բերայ, եկեղեցիս բացանք, Տէրն վայլել տայ, ամէն:

Առաջի անունը Տրիարֆիլ, օծվեցամք Տէր Տիմօ-
բէօս անունով:

Ք. 1ա.— Այս գիրքը գրէց Պապայանց Բանայօթը
1872 յուլիս 27, ով որ իշէ Աստուած ողորմի ըսէ,
ամէն: (Հետագայում շնչված է):

(Կա հունարեն գրված երեք անուն ազգանուն):

Սա մի գիրքըս պարպար Մոխայելին Լիֆաթէ տա-
րադիր, լրսնցի բերել տրվի Լիֆաթէին 1. (=10) մ.
տալով կօխկըն շնիլ տրվի և 0 (=5) մ. ալ տրվի
փօստայ ծաղրըն եկեղեցիին հիսապին գիրեցի և մեծ
Իօյտան էֆենտի Եայլմելիանի խրրկեցի որ մեր Սուրբ
յօսկեբերնայ եկեղեցիին խրրկէ: 95, ապրիլ 29, Փիթ-
րօսպիրօ Խանազիանց, Պօլիս, Վազիր խանըն:

Ք. 66բ.— Սոյն Սուրբ Պատարագի Խորհրդատետերն
հօրս մեծ հօրը ձեռագիրն լինելով քանի տարի առաջ
նուիրեած գիւղի զահանան... Միխանչ Լէֆթէ տարած
է, Եւ ի վերջը Շուրս գիւղի ժողովուրդներէն յարգի Փեթր-
այա աղան բերել տալով կողմիկ եւ վեր է որ փոստայի
ղրկած եր, Յիշալ Փեթրայ աղայէ մեծապէս շնորհակալ
եմք որ սոյն մեր ազգատոհմի նուիրած գիրքն խաւա-
րէն ի լոյս ընծաեած է: 1895 մախի ծ:

Յիշել Եօվն աղայի թոռն Ծոանի աղայի որդին Սի-
մէօս է. Այմելեան, վանեցի:

Ք. 67ա.— Յիշատակարան:

Այս գիրքը Խորհրդոյ Սրբոյ Պատարագի ձեռագիր
հասուր: Յունաստանի Աթէնք մայրաքաղաքի Բէրիս-
տէրի թաղի Ս. Աստուածածին եկեղեցոյ նուիրած է 18
մայիս 1961-ին բնիկ Ակնեցի 1861-ին (հարիւրամեայ)
ծնած պր. Եփրեմ Թաշեան, զաւակը՝ Պետրոսի և
Սրբուհիի և հանգուցեալ կնոջմէն աղջիկ մը ունի՝
Սրբուհի անունով:

Եփրեմ Թաշեան ժամանակի ընթացքին զտնուած է
Խարբերդ, Ատանա և Իզմիր, ուրկէ 1922-ին ապաստա-
նած է Յունաստան և այժմ կը բնակի Աթէնք, Տուր-
ղութի, D. H. 524 բնակարանը:

Ան՝ Ս. էջմիածնայ Մայր Աթոռի հաւատարիմ, եր
յօժար կամօք նուիրած է այս մատենը, (Ք. 67բ)
խնդրելով ստացողներէն ողորմիս հանել իր հանգուցեալ
ծնողաց, տիկնոջ և ազգականներուն և իր ու աղջկան
համար առողջութեան ու յաջողութեան մաղթանք:

Յունահայոց առաջնորդական տեղապահութիւնս յար-
մար նկատեց սոյն ձեռագիր հատորը նուիրել Մայր
Աթոռ Ս. էջմիածնայ զրազարանին՝ ի վախելումն բա-
նասէր հոգիներու և ի փրկութիւն կորսուելու և փճա-
նալու վտանգին:

Առաջնորդական տեղապահ յունահայոց՝ խաչակիր
Աւմեմակ Մեսրոպ Ա. քննչ. Տէր Յակոբեան (Կ. Պոլ-
սեցի): 10 յունիս 1961, Աթէնք:

(Կլոր կնիք) Հովութիւն Հայ Առաք. Ուղ. Եկեղեցոյ,
1958, Աթէնք: (Նաև նույնի հունարենը):

№ 205

ԱԶԳԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏՈՏԷԼԻ

Քերբեր՝ 14.— Պրակներ՝ 2, Ա՝ 6, ԽԿ Բ՝ 8 թե-
թից: Մեծութունը՝ 25,7×19,5×0,3 սմ.:— Նյութը՝
ղեղնած դիմացկուն թուղթ:— Կազմը՝ շուրի.— Պահպա-
նակներ՝ շուրի.— Վիճակը՝ բավարար.— Գրութունը՝

փոխանակ սովորականի նման լայնքին գրվելու, գրվա-
ծ երկայնքին:— Դատարկ քղբեր՝ 13բ, 14ա և 14բ:—
Տաղեր՝ անկանոն և փոփոխական:— Գծումներ՝ ճնշու-
մով:— Գիրը՝ նոսրագիր:— Զարդագրութուն՝ հայկական
մանրանկարչության մի շատ գեղեցիկ նմուշ է սույն
ձեռագիրը: Առաջին էջում կա մի շատ գեղեցիկ զվա-
զարդ, նկարված ամբողջ էջի երկայնքով: Ձեռագիրը
ունի գեղեցիկ թունազրներ, սրբանկարներ և առաքյա-
ների նկարներ: Գործ են ածված ոսկեզույն և նարնջա-
զույն, կանաչ և կապույտ, մոխրագույն և կարմիր գույ-
ները և դրանց նրանգեւերը: Բոլոր էջերում կան ճյու-
ղագրական ծանր կամ աղյուսակներ և շրջանակներ,
Օգտագործված են մի քանի գույներ, ցույց տալու հա-
մար որոշ դասավորումներ և խմբեր:— Գրիչը՝ Ղազվի-
նեցի ներսես վարդապետ:— Պատվիրատուն՝ անհայտ:—
Մաղկողը՝ անհայտ:— Ժամանակը՝ ժէ դար:— Վայրը՝
շատ հավանաբար Պարսկահայաստան:— Մանրութունը
սույն ձեռագիրը 1962 թվականի հունվար ամսին նվիր
է ստացված Կահիրեից, պր. Հրանդ Նասիպյանի կողմից:

ՀԻՇԱՍԱԿԱՐԱՆՆԵՐ

Ք. 1ա.— Ըստ Մեծին Արիստո(գրված է
գեղեցիկ թռչնագրերով)տէլի իմաստասիրի
հարկ է ամենայն ընդհանրականի յառաջանալ
իւրում առանձնականի: Զի ընդ հանրականօք
առանձնականացն դիւրագոյն հմտանամք: Եւ
զի կամեցայ խօսիլ ի վերայ տոհմանց և աղ-
գակցութեանց, և պատմութեանց Հին և Նոր
Կտակարանաց: Պատշաճաւոր թուեցաւ ինձ.
նախ, բաժանել զգիրս Հին և Նոր Կտակա-
րանացն: Զհին Կտակարանացն բաժինքն
կարգել կամիմ, ըստ Եւրայեցուցն կարգի և
բաժանմանցն: Ուստի և էառ սկիզբն, և սփռե-
ցաւ ընդ ամենայն ազգս: Եւ զկարգ նոր Կտա-
կարանացս, կարգեցի ըստ կարգի Ուղղափառ
Եկեղեցու սուրբ վարդապետաց՝ ի բաժան-
մունս բոլորակացոյ: Եթէ հաւանական թուես-
ցի, Տեառն շնորհ: Ապա թէ ոչ՝ ներել աղաչեմ
տկարութեանս:

Ք. 5ա.— Տեառն Յիսուսի Քրիստոսի ծա-
ռայ Ղազվնցի ներսէս վարդապետ (գրված
1,5 սմ. մեծությամբ մեծատառերով):

ՀԻՇԱՍԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. 14բ.— Նուէր Հր. Նասիպյանից, 17.1.1962:

№ 206

ՏԱՂԱՐԱՆ

Քերբեր՝ 98.— Պրակներ՝ 9, յուրաքանչյուրը 10
թերթից, ի բաց առայլ 7 պրակը՝ 8 և Ե՝ 18 թերթից
են:— Մեծութունը՝ 22,5×15,8×1,7 սմ.:— Նյութը՝
սպիտակ հասարակ բարակ թուղթ:— Կազմը՝ թղթով
ծածկված սովորաթուղթ, որի վրա մի քանի կենդա-
նիներ են նկարված:— Պահպանակներ՝ սկզբից և վեր-
ջից մեկական թերթ հասարակ թուղթ:— Վիճակը՝ բա-
վարար:— Գրութունը՝ միասուր:— Դատարկ քղբեր՝

Յ. — Տողեր՝ 21. — Գծումներ՝ ճշումով: — Գիրք՝
 Պարզագրություն՝ ձևագիրն ունի մի հա-
 ճիկ ձևագիր (թ. 53ա) և հինգ հատ էլ շատ հա-
 ճիկ փոքր գլխադարձեր և վերջնադարձեր: — Գրիչը և
 բոլոր՝ Պաղտասար վարժապետ: — Պատվիրատուն՝
 Սարգսյան: — Ժամանակը՝ ժբ. — Ժբ. դարեր: — Վայրը՝
 Հավանարար Արևմտյան Հայաստան: — Մանրա-
 յան 1963 թվականի հունվար ամսին ձևագիրը նվա-
 ճացված կահիրեից, Երևանյան ընտանիքի կողմից,
 Սարգսյան Հայրենազարձ Գեորգ Փանոյանի ձեռամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Յ. թ. 2ա — 50ա. — (Կրոնական, եկեղեցա-
 ց և աշխարհիկ 82 տաղեր):
- Ֆ. թ. 51ա — 52բ. — Յուդայական որբանութեանց
 ձևագրաց իւրաքանչիւր տաղից և տաղարա-
 համարովն յայտնեցեալ:
- Պ. թ. 53ա — 94ա. — Տաղիկներ սիրոյ և
 պատանաց և այլ:
- Պ. թ. 94բ — 95բ. — Յանկ և ցուցակ գլխե-
 ցն տաղիցս (ընդամենը 61 հատ են):
- Պ. թ. 96ա — 97բ. — Տաղ Ղարիպի ի հնոյն
 ապեցալ խղճալի ձայնի: Ի գոյնն նէրտին
 մնլը գավաք պէնիմ մուսլումու: (Տաղիկնե-
 ց մի քանիսը գրված են հայատառ տաճ-
 արեն: Իբր նմուշ տալիս ենք Ս. էջմիածնին
 յիրված երկու տաղեր):
- Պ. թ. 25ա. — Առ Սուրբ էջմիածին մայր հա-
 տոյ Հայաստան երկրի: 41.

Անեղ գոչմամբ ուն ի ձեռին.
 Իշեալ Որդին ձօրն Միածին,
 Բախէր զերկիր հաւմամբ ուժգին.
 էջմիածին, էջմիածին:
 Անուն սխեղի.
 Սխեղիտյն Յիսուսի,
 Իջմամբն անուանեալ:
 Բազմաշար ճանապարհին.
 Գրգռեալ հայրապետին,
 Յայտնէր տեսիլն իջմամբ բանին,
 էջմիածին, էջմիածին:
 Գըմբքայաւի խորան կազմեալ.
 Կերպն ի յերկնից լուսաձեւեալ,
 Ինձ փրկապետն տանար շինեալ.
 էջմիածին, էջմիածին:

- Յ. թ. 25բ. — Դեռողն արբուն՝ յառեալ եայէր.
 Վաղաշապատն երբեմնապիլեր,
 Յարմէ աղբիւր շեռեցաք բրդխէր.
 էջմիածին, էջմիածին:
 Երկին յերկրի հաստատեցար,
 Դրոշմով հոգւոյն զիս ըստացար,
 Մայր հաւատոյ անուանեցար.
 էջմիածին, էջմիածին:
 Զուարթուն անուն հայրապետին.
 Հայաստանեայց լուսաւորչին,
 Մախար մաղբաճէն ի քեզ մատչին.
 էջմիածին, էջմիածին:

Յ. թ. 80բ. — Առ Սուրբ էջմիածին: 32.
 Հայոց պարծանք՝ Արաւոտեան
 Սուրբ գաւառին ակրն պատուական.
 Լուսովըն երկնից ձեակերպեալ
 Լուսակառոյց խորան անբմամբ:
 Մայր հաւատոյ գիտեմ ըզնեզ
 Հայաստանեայց Սուրբ Եկեղեցայ,
 Գերապայծառ երկնաւըման՝
 Գերստեղծի Սուրբ էջմիածին:

Յ. թ. 81ա. — Սրբկապար քօրկանէմ
 Սրբազումար տանար սիրական.
 Քէպէտ յերկրի երեկեօք,
 Բայց քեքոպալէս համայն վերեական:
 Զի ոչ ունիս յերկրի ճարտար,
 Այլ երկնային զՄիածին ձօր,
 Տուն և տեղի Տեառն Աստուծոյ.
 Մեձ պատուելի Սուրբ էջմիածին:
 Անեղ գոչմամբ ուն ի ձեռին
 Իշեալ յերկնից Միածին Որդին,
 Տեսանելով արբուն անուն՝
 Հայաստանեայց Սուրբ Լուսաւորչին:
 Ոսկի ուտամբն ուժգին բաղխմամբ
 Դողացուցեալ ըզաճարամետս.
 Բարձրապատի Արքա Հայոց՝
 Յոյժ յարգելի Սուրբ էջմիածին:
 Անքի անհուն գօրացն երկնից՝
 Իշեալ ըզնե տղայոյն Միածին,
 Լուսով լըցեալ դաշտն երջանիկ
 Սին լուսեղէն կանգնեալ յերկրի:

Յ. թ. 81բ. — Կարողիկէ մեզ կառուցեալ,
 Անուանելի ի դրանց դժոխաց.
 Իզովն օծեալ գետ անտեան,
 Մայր պաշտելի Սուրբ էջմիածին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

- Յ. թ. 50ա. — Մանիր աստ սիրելի ընթերցող.
 Զի բանէ իւրաքանչիւր տաղից փոքրիկ,
 Տաղարանիս այտորիկ՝
 Ի վերայ ձայնին գոյով շինեցեալ՝
 Յորժամ ի քի ընթեռնեալին.
 Այնքան համեղ երեկն:
- Յ. թ. 50բ. — Զի զանազան հանգէտ և անհան-
 գէտ. շափաւորութիւնք նոցին ի վերայ գու-
 նոցն վայելչանան:
 Նաև եթէ գլատուկ գոյն նորին ոչ գիտելով՝
 այլ ինչ գոյն տացես նմա, ոչ այնքան ճոխա-
 քայլ արտաբերի որպէս իւր իսկական գու-
 նովն:
 Զի սոքին այնպիսիք են, որոց բանքն ի վե-
 րայ գունոցն են շինեալք, և ոչ գոյնն ի վերայ
 բանիցն:
 Վասն որոյ պարտիս գիտել զգոյնն և այնու
 վարել զբանն, զի համեղ գայցէ լսելոյ:
 Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ ընդ ձօր և
 ընդ Սուրբ Հոգւոյն, փառք յաւիտեանս: Ամէն:

Ք. 80բ.— Ի յայնմ ատուր ահեղին ողորմեա Տէր հոգւոյ իմոյ բազմամեղի:

Յարմար և անյարմար, ի շափ, ի վերջ:

Ք. 87բ.— Եւ ծանիր աստ, ո՛վ սիրելի ընթերցող, զի ոմանք երգեցմունք ի փոքրիկ տաղարանիս թէպէտ ըստ արտաքին կերպին երևին մարմնականք, բայց ըստ ներքին դիտեցմանն համայնքն առ հոգևորն վերաբերին, և յայտ այնոցիկ է, որք գիտեն զհոգոյն խորհիլ: Զի մի է ճշմարիտ սիրելին և մի է սէրն ճշմարիտ:

Ք. 97բ.— Հարուստ և զմայլեցուցիչ տաղարանիս այսմիկ որ յօրինեցաւ ի գեղափայլ և մաքրափայլ Պաղտասար վարժապետէ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 1ա.— Այս գիրք եղբար Ադանաս վարժապետինն է:

Նսւբր Սուրբ էջմիածնայ Երկանեան ընտանիքի կողմէ: 3—10—62:

Ք. 1բ.— Այս տետրակս տիրացու Քալֆայի (Նկարված է մի նազ այս էջում):

Ք. 98ա.— Այս տետրակըս տիրացու Քուրճայ: Պինի (4 հատ):

№ 207

ԳՈՒՇԱԿԱՐԱՆ

Քերբեր՝ 144.— Պրակներ՝ 18, յուրաքանչյուրը 3 թերթից: Մեծուրյունը՝ 21,6×18×1,9 սմ.: Նյութը՝ խոնացած հասարակ թուղթ: Կազմը՝ լաթակազմ ստվարաթուղթ, կոնակը՝ սև կաշի, որի վրա գրված է ոսկեգույն տառերով. «Գուշակ ապագայից»։ Պահպանակներ՝ սկզբից և վերջից մեկական հասարակ բարակ վարդազույն թուղթ: Վիճակը՝ լավ: Գուրջունը՝ միասուն: Դառաղի թղթերը՝ 139—144: Տողերը՝ 21: Գծումները՝ ճշումով: Գիրը՝ Նոտրգիր: Զարգացրւթյուն՝ չունի: Գրիչը՝ Սարգիս քահանա: Պատվիրատուն՝ անհայտ: Ժամանակը՝ 1841 թ.: Վայրը՝ Արևմտյան Հայաստանի Ամասիա քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցի: Մանրություն՝ 1957 թվականին Մայր Աթոռը նվեր է ստացել Ստամբուլից՝ Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Եսվարը քահանա Պալլանից, փարիզարձակ Ալբերտ Աշնյանի միջոցով:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Ք. 1ա.— Ցուցակ գուշակութեանց, տրուհեալ յերկուս հատորս:

Որ ի նախկին հատորով գրի թարգմանութիւն և մեկնութիւն տաղաշափական բանիւք արարեալ գուշակութեանց Վէյսի էֆէնտի կոչեցեալ Մէվլէվի տէվրիշական կրօնէ՛ հոշակաւորի առն ումեք, որ աստի իբր հարիւր երեսուն ամա յառաջ՝ խօսի վասն զրկանաց և անիրաւութեանց մեծամեծացն տէրութեան թուրքաց, և գուշակէ գառեցումն Ղըրիմայ ի

ձեռանէ նոցա ի մեծէ Եգաթէրինէ Երկրորդ Օգոստափառ Կայսրուհոյ ամենայն Բուստաց:

Եւ և ցուցման վասն ժամանակի վերջաւորութեան մահմէտական տէրութեան արտահանմամբ ի գրեանց նոցին՝ համեմատ մարգարէական գուշակութեանց այլոց եկեղեցական ընտիր անձանց, և այլ զանազան գիտնոց:.

Այլև համառօտ զեկուցմունք աղանդի մահ(ք. 1բ)մէտական տէվրիշականաց, ա ի բացայայտ վերծանելոյ զամենայն միութանից՝ յիշեալ Վէյսիի, որ ի շարունակ տաղաշափութեան իւրում գրի. և յերկրորդուհատորի տեսանի յարմար ասութիւն ինչ ի վերայ բանից Յայտնութեան երանելոյն Յովհաննու, վերաբերելով զնոսա վասն ծագման Մահմէտի՝ և հետեակաց համար:

Եւ և վասն խանգարման տէրութեան նոցա համակցին նաև սակաւ բանք վասն տեսլեան Սրբոյն Դանիէլի և Սրբոյն Եղեկիէլի:

Աշխատասիրեալ ի Գեղամեան Մարգարէաքարիայ Խօճենց Երևանցույ:

Եւ ընծայեալ ի պատիւ Ա՛ ստուծոյ՛վ զօրացեալ Մեծի և յաղթող տիեզերակալ կայսերութեան ամենայն Բուստաց:

Յամի Տեառն 1789 և հոկտեմբերի 1:

Ի Սանկ Պետրբուրգ:

Ք. 3բ.— Զեկուցմունք:

Ք. 4բ.— Հատոր Ա.

Թարգմանութիւն և մեկնութիւն գուշակողական տաղաշափ բանից Վէյսի էֆէնտի կոչեցեալ առն հոշակաւորի:

Ք. 45բ.— Հատոր Բ.

Յորում գրի յարմարական ասութիւն ինչ ի վերայ տեսլեան և Յայտնութեան Սրբոյն Յովհաննու աւետարանչի:

Սկսեալ յերկոտասաներորդ գլխոյ այնորիկ տեսլեան մինչև ցվերջ գլխոյն կարի յոյժ համառօտ ասութեամբ, վերաբերելով զբանսրբոյն վասն ծագման Մահմէտի և հետեակաց նորին, և և խանգարման տէրութեանց նոցին:

Եւ նաև սակաւ բանք վասն տեսլեանց Սրբոյ մարգարէին Դանիէլի, և վասն մարգարէութեան Սրբոյն Եղեկիէլի:

Աշխատասիրեալ ի Գեղամեան Մարգարէաքարիայ Խօճենց Երևանցույ:

Եւ ընծայեալ ի պատիւ Ա՛ ստուծոյ՛վ զօրացեալ մեծ և յաղթող կայսերութեան Բուստաց:

Յամի Տեառն 1789 հոկ. Ա:

Ի Սանկ Պետրբուրգ:

Ք. 136ա.— Վերջ: 1809 և մար. 16, ի Սանկ Պետրբուրգ: Ամենախոնարհ ծառայ Մարգարէաքարիայ Խօճենց:

Ք. 137ա.— Ոտանաւոր.

Բան Առաքել վարդապետի՛ զոր ասացեալ է ի վերայ Կոստանդնուպօլստ, և գալստեան

առան ֆոսակ ազգին առ ի ազատել գաշարհս Հայաստանեայց:

բոյ Ֆանկաց ազգն շարժին, կամօք անման բազաւորին.

ուր յառաջն գայն սասցին, սուրբ հայրապետք ստուածային:

Սուրբ Սարգիս Հոգովն խօսէին, և զգալոցն պատմէին.

առան գալոյ Ֆանկ ազգին, ի ժամանակս յաւուս յետին:

Ամենեմեան անասարակ, արիական ազգն շարժին, արիարանեալ ի միասին, վառին ի սէրն աստուածային:

Մայրս յայնքն ծովով և ցամաքաւ, որպէս զաստեղս որք ոչ բախն.

Պարզորելով զամենեանն, յաստուածառաք պատեհազմին:

Մայիս Ըստամպոյլ քաղաք անուն, ամենագոր կամօք Փրկչին:

Մայրս յառաջ համարձակին, և ի բոլոր յաշխարհս սփռին: Մայրսն թրկիրն յարևելից, և կասորն զամենեանն.

Մայրս զառիժ մըռնելով, ի յանօրէնսն համարձակին: Թողուն զքաղաքն Երուսաղէմ, տնօրէնութեան Տեառն տեղին.

Մայրս կապաւ զարդարեացն, զգոուն Տարութեան գերեզմանին:

Մայրս զի լուսն եհաս ևնցին, ըստ հրամանացն Քրիստոսի.

Մայրս սասց յԱնտարանն, յառաջագոյն Աստուածորդին:

Ք. 137ր.—

Մայրս անտեղից ազգն ցնծան, յԵրուսաղէմ սուրբ քաղաքին. և հերանտսն կորնչին, որպէս փոշի անհետ լինին:

Մայրս Երանի ժամանակին, որք հանդիպիք համբաւ բարին.

Մայրս յաւուս Սիմէոնին, որ ցանկացաւ տեսնան Փրկչին:

Մայրս՝ բարձրանայ եղբիւր խաչին, փառօք խաչեալ բազաւորին.

Մայրս անոսաց ազգն ամենայն, անասարակ կործանեացին: Մայրս լինին զօրք Ֆանկին, որպէս զաւազ յեզր ծովին.

Մայրս ոք կարէ յաղթել ևնցին, արիական Ֆանկ ազգին:

Մայրս կայծակն ի յեղէզին, ի յայլազգիսն արձակեացին. և հալածեն զազգն տանկին, զի հակառակ են սուրբ խաչին:

Մայրս զՀոռոմոց գաշարհն ամէն, մինչ է Մարք հասանիցեն.

Մայրս զգիաց բնակարան, զանօրինաց ուխտատեղին: և զանաստանս հասանիցեն, և ի Գալիլէժ յառաջեացեն.

Մայրս անասան մտանիցեն, և գերեացն զամենեանն: Մայրս ամէն պայծառանայ, ի հաւատացն Քրիստոսի.

Մայրս անոսաց ազգն ամենայն, ի յաշխարհէս հալածեցին: Մայրս կողմնիցին՝ որ անբեալ, ի յամենայն տեղ շինեացին.

Մայրս հերձուրեամբն Քրիստոսի, յերկիրս ամէն փառաւորի: և Ազգս հայոց պայծառանայ, զի յայլազգեացն ազատեացին.

Մայրս երկեալ ցնծան ամենեմեան, որպէս յաւուս Լուսարչին:

Մեծ Տրդատ և Սուրբ Գրիգոր, յորժամ ի Հոռոմ քաղաք գնացին, Միլիանց դաշինս հաստատեցին, ընտ կոստանդիանոսի և Սելըբասոսի:

Ք. 138ա.—

Չորս հարիւր մարդ ի յայն բողին, յԱրշակունեաց Պալատունին.

Չի մնացեն և անեացեն, Ֆանկ և Հայք միարանին: Արդ անաշնորդ Եոթա լինին, արիական Ֆանկ ազգին.

Գայցեն յերկիրս հաստատեացին, և օգնական մեզ լինիցին:

Առցեն զգաւառն Արարատեան, որ է տեղիք Լուսարչին. Քաղաւորին էլ միանին, Վաղարշապատ Սուրբ քաղաքին:

Փառք Աստուծոյ Հօրն վերին, և Միածին Որդոյ Բանին. Հոգոյն Սրբոյ կենաց տուողին, խաղաղութեանց պարգևողին:

Ինն հարիւր երկու բալին, Հայաստանեայց մեծ տուածին.

Յոր Ստամպոյլ քաղաքն առին, և զԲիստունեայս կոտորեցին:

Եւ Առաքել մեղօք ի լի, լցեալ շարեօք ամենայնի, Յարմարեացի շարս բանի, վասն Բիւզանդ մեծ քաղաքի:

Եւ սասացն Տէր որդւմի, ինն բազմամեղ Առաքելի, Որ գայս բանս ի շար եղի կոստանդիանուն մեծ քաղաքի:

Այլ և ծնողաց իմաց բարի, Գուրգու Մելիք և Երեսեթի. Որ զառածեալս մեղաց զերի, ծնան զաւակ որդւմիլի:

Եւ բարունայն իմ Գրիգորի, որ մակառուար Մերեն կաշի.

Նահատակին այն ցանկալի, և քաղաքն վարդապետի: Փառք Արարչին ամենայնի, Հօր և Որդոյն իւր Միածին, Հոգոյն շնորհաց պարգևողի, անցեալն, այժմուս, յապագայի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ք. 138ա.— Գտի զայս ամասնացի Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ ծերունի Տէր Սարգիս քահանայի ի ձեռս օրինակեցի. 1841 և օգոստոս 10:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ք. 139ա.— Նուէր աստուածակառոյց Միածնաէջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանին:

Այս գիրքը հայ ժողովուրդի բարեկամ ողոս մեծ յարգութեամբ ազգային մասին շահեկան տեղեկութիւններ պարունակելուն համար, Հայաստանի գիտութիւններու ակադեմիայի մասնագէտներուն ուշադրութեան կը յանձնեն:

Սկիստար Ս. Կարապետ եկեղեցիի հողեր հովիւ Շաւարշ Բանեայ Պալքեան

14 յուլիս 1957, Պոլիս:

Ք. 139բ.— A monsieur Albert Achdjian, fondateur du Musée Arménien de France lors de son passage à Istanbul le Révérend Père Poladian, d'Uskudar, prie d'envoyer à Sa Sainteté Vasken I-er, Catholico de tous les Arméniens du Monde ce manuscrit.

(Շարունակելի)